Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Իրանահայ համայնքը (1941—1979 թթ.), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 331 էջ։

Մեր պատմական միտքը ցարդ քիչ է անդրադարձել սփյուռքահայ համայնքների պատմության ուսումնասիրման կարևոր խնդրին։ Անբավարար է ուսումնասիրված ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սփյուռքի պատմությունը։ Ասվածը լիովին վերաբերում է նաև հայկական հնադույն գաղթօջախներից մեկին՝ իրանահայ համայնքին։ Հայ-իրանական տնտեսական, քաղաքական և հոգևոր փոխառնչությունները հազարամյակների պատմություն ունեն։ XVII դ. սկզբից իրանահայ համայնքն անգնահատելի դեր է խաղացել այդ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում։

Իրանահայության հարուստ պատմության առանձին դրվագներ հանգամանորեն լուսաբանված են ինչպես խորհրդահայ, այնպես էլ իրանահայ հեղինակների գործերում։ Նշանակալի ավանդ ունեն նաև պարսիկ հեղինակները։ Սակայն ներկայումս առաջին պլան է մղվում ոչ թե առանձին համայնքների պատմության դրվագային ուսումնասիրությունը, այլ դրանց ընդդրկուն և ամբողջական պատմության շարադրումը։

Այսօր ընթերցողի սեղանին է Հ. Փահլևանյանի արժեքավոր մենագրությունը։ Ժամանակագրական առումով այն ընդգրկում է իրանահայ համայնքի նորագույն պատմության առավել ուշագրավ հատվածը, երբ Ռեզա շահի բռնապետության տապալման հետևանքով երկրում ստեղծված քաղաքական նոր իրադրությունը բարենպաստ պայմաններ էր ստեղծում առղային փոքրամասնությունների և մասնավորապես հայ համայնքի ազգային-հոգևոր դարգացման համար։

Հեղինակին հաջողվել է հայերեն, պարսկերեն, ինչպես նաև այլալեզու հարուստ աղբյուրների և գրականության մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա ներկայացնել իրանահայ համայնքի 1941—1979 թթ. համակողմանի և ընդգրկուն պատմությունը, բացահայտել նրա զարգացման հիմնական օրինաչափությունները։ Իրանահայության պատմությունը շարադրված է Իրանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային պատմության լայն ֆոնի վրա, ինչը հնարավորություն է տալիս օբյեկտիվ պատկերացում կազմել հասարակական այն միջավայրի մասին, ուր գտնվում էր հայ համայնքը։

Աշխատության առաջին գլխում հանգամանորեն համադրելով իրանահայերի թվաքանակի մասին բազմաթիվ հակասական և իրարամերժ տվյալները, հեղինակը ցույց է տալիս, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում իրանահայերի թիվը գրեթե կրկնապատկվել էր, Իրանի իսլամական հեղափոխության նախօրյակին հասնելով շուրջ 200 հազար մարդու (էջ 40)։ Դա գերազանցապես համայնքի ներքին աճի արդյունք էր, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ 1946 թ. սկսված հայրենադարձության հետևանքով մեծ քանակությամբ իրանահայեր արտագաղթեցին Խորհրդային Հայաստան։

Անդրադառնալով իրանահայության տեղաբաշխման հարցին, հեղինակը վիճակագրական հարուստ տվյալների հիման վրա ցույց է տալիս, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համայնքի ներսում տեղի է ունենում բնակչության զգալի տեղաշարժ։ Իրանահայության ավանդական կենտրոնավայրերը՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) և հարավային (Նոր Ջուղա կենտրոնով) շրջաններն աստիճանաբար կորցնում են իրենց նախկին նշանակությունը։ Դրա փոխարեն աճում էր մայրաքաղաք Թեհրանի դերը։ 1946 թ. ստեղծվում է համայնքի նոր՝ կենտրոնական շրջանը, Թեհրան կենտրոնով, որն, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, «...իր նշանակությամբ, բնակչության թվով ու կազմակերպվածության տեսակետից ներկայումս առաջատար դեր ունի և կազմում է իրանահայ համայնքի կորիզը» (էջ 20)։ 1979 թ. Իրանում բնակվող հայերի 78,5 %-ը բնակվում էր կենտրոնական, 9-ը՝ հյուսիսային, իսկ 12,5-ը՝ հարավային շրջաններում (էջ 40)։

Միանգամայն փաստարկված է Հ. Փահլևանյանի այն տեսակետը, որ նշված ժամանակաշրջանում համայնքի ներսում տեղի էին ունենում զգալի կառուցվածքային փոփոխություններ։ Իրանում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և քաղաքների աճը մեծ չափով խթանում էին քաղաքային հայ բնակչության աճը։ Այսպես, եթե 1944—45 թթ. իրանահա-

յության ճնշող մեծամասնությունը գյուղի բնակիչներ էին, ապա 70-ական թվականների վերջին նրա շուրջ 95 %-ը կամ մոտ 190 հազարը կազմում էին քաղաքաբնակները (էջ 41)։

Հաջորդ բաժինը նվիրված է համայնքի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի քննությանը։ Դժբախտաբար պաշտոնական վիճակագրական տվյալների բացակայությունը հեղինակին հնարավորություն չի տալիս սոցիալական ստույգ տարաբաժանում անցկացնել, սակայն բազմաբնույթ փաստերի համեմատական քննության շնորհիվ հեղինակը հանգում է այն ճիշտ հետևությանը, որ Իրանի քաղաքային հայ բնակչության մոտ 55 %-ը պատկանում էր մանր կապիտալիստական կացութաձևին։ Դրանք հիմնականում արհեստավորներ էին, առևտրի, արդյունաբերության և սպասարկման ոլորտի մանր ձեռնարկատերեր։ Միևնույն ժամանակ հայ խոշոր առևտրաարդյունաբերական բուրժուազիան, չնայած իր փոքրաթվությանը, նշանակալի դեր էր խաղում երկրի տնտեսական կյանքում և զգալի կապիտալներ է ներդրել Իրանի արդյունաբերության, շինարարության և սպասարկման բնագավառներում։

Հայ համայնքի սոցիալական կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունը մտավորականության նկատելի շերտի առկայությունն էր։ Այն կազմում էր համայնքի ողջ բնակչության շուրջ 10 %-ը։ Դրանք հիմնականում «ազատ» մասնագիտությունների ներկայացուցիչներ էին՝ բժիշկներ, իրավաբաններ և այլն։ Միանգամայն իրավացի է հեղինակը, նշելով, որ բարեփոխումների շրջանում՝ 1960-ական թվականներին, ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ մտավորականության զարգացման համար։

Իրանական արդյունաբերության զարգացման և գյուղացիների հողազրկման պրոցեսին զուգընթաց աճում էր հայ բանվորության թիվը։ Սոցիալական այս խավին բաժին էր ընկնում քաղաքային հայ բնակչության մոտ 28 %-ը։ Հատկանշական է, որ նրանց շրջանում զգալի թիվ էին կազմում բարձր որակավորում ունեցող բանվորական կադրերը։

Քննության առնելով գյուղական հայ բնակչության սոցիալական դրությունը, Հ. Փահլևանյանը հանգում է այն եզրակացության, որ օտարերկրյա կապիտալի ներթափանցման և ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետևանքով տեղի էր ունենում սոցիալական շերտավորման բուռն պրոցես, որի անմիջական հետևանքը գյուղացիական լայն խավերի հողազրկումն էր, նրանց կախյալ վիճակի ուժեղացումը։ Ուրվագծելով հայկական գյուղերի սոցիալական շերտավորման պատկերը (էջ 61—64), հեղինակը հանգամանորեն ներկայացնում է գյուղական հայ բնակչության ամենաստվարաթիվ խավի՝ չքավոր գյուղացիության տնտեսական ծանր վիճակը, դա համարելով դեպի քաղաք գյուղացիության դանգվածային գաղթի հիմնական պատճառ (էջ 64—84)։

Իրանահայ համայնքն ուներ որոշակի ինքնավարություն։ Աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա Հ. Փահլևանյանը ցույց է տալիս, որ դեռևս XX դ. սկզբից մասամբ սահմանափակվեց թեմական առաջնորդների իշխանությունը. հիմնվեցին ընտրովի թեմական խորհուրդներ և մշակվեցին թեմական կանոնագրություններ։ Բարձր դնահատելով թեմական խորհուրդների դերը, հեղինակն իրավացիորեն գտնում է, որ նրանք համայնքի բոլոր հայերի համար վարչական գլխավոր մարմնի դեր չէին կարող տանել, որովհետև միավորում էին միայն առաքելական եկեղեցու անդամներին, մինչդեռ Իրանում բնակվում էին զգալի քանակությամբ հայ կաթոլիկներ, բողոքականներ, դալստականներ (շաբաթականներ) և ունիթորներ։ Մինչև 1956 թ. համայնքի թեմերը ենթարկվում էին Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությանը։ Սակայն 50-ական թվականների վերջից նրանք անջատվեցին Մայր Աթոռից և ձևակերպեցին իրենց կապը Անթիլիասի հետ։ Լիովին կարելի է կիսել պատմաբանի այն տեսակետը, որ այդ խզման հիմնական պատճառը հետադիմական շրջանների հակախորհրդային դիրքորոշումն էր։

Հեղինակը զգալի տեղ է հատկացրել իրանական վարչակարգի ազգային քաղաքականության լուսաբանմանը (էջ 93—112)։ Հանգամանորեն վերլուծելով ազգային փոքրամասնությունների և մասնավորապես հայերի նկատմամբ կիրառվող խտրական քաղաքականությունը, նա համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ նույնիսկ ռեզաշահյան բռնապետության տապալումից հետո էլ շարունակվում էր ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման քաղաքականությունը։ Ընդ որում, ազգային փոքրամասնությունները չէին ճանաչվում որպես այդպիսին և հանդես էին գալիս կրոնական փոքրամասնություններ անվան տակ։ Միայն 60-ական թվականների բուրժուական վերափոխումների շրջանում այդ սահմանափակումները մասամբ վերացվեցին։

Աշխատության երրորդ գլխում Հ. Փահլևանյանը քննության է առնում իրանահայերի բազմաթիվ հասարակական կազմակերպությունների գործունեությունը, նրանց մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին։ Գնահատելով բազմաբնույթ մշակութային, երիտասարդական, բարեգործական և այլ կազմակերպությունների գործունեությունը, հեղինակը հանգում է այն ճիշտ հետևությանը, որ «...չնայած իրենց սկզբունքային տարաձայնություններին, այնուհանդերձ դրանք նեցուկ են հանդիսացել համայնքի երիտասարդության շրջանում հայապահպանման, մայրենի լեզվի ամրապնդման, կրթության բարելավման, ազգային մշակույթի ու գրականության բարգավաճման գործում» (էջ 146)։ Հատկապես գնահատելի են առաջադիմական կազմակերպությունների շանքերը համայնքի առողջ ուժերի համախմբման, Համաիրանական ազգային խորհրդի և Ազգային ճակատի ստեղծման ուղղությամբ։

Իրանահայության կյանքում կարևոր հասարակական-քաղաքական իրադարձություն էր հայրենադարձությունը, որն սկսվեց 1946 թ.։ Հայրենադարձության մասին որոշումն արագորեն տարածվեց համայնքում և մեծ խանդավառություն առաջացրեց։ 1946—82 թթ. Իրանից Հայաստան է հայրենադարձվել շուրջ 45 հազար հայ։ Հատկանշական է, որ զանգվածային հայրենադարձության ժամանակ ամենամեծ տոկոսը բաժին էր ընկնում Իրանին։

Աշխատության վերջին բաժնում Հ. Փահլևանյանը բազմակողմանի ու խորը քննության է ենթարկում համայնքի հոգևոր-մշակութային կյանքը։ Կասկած չի հարուցում այն փաստը, որ և՛ հայրենիքում, և՛ հատկապես սփյուռքում հայապահպանական հիմնական գործոնը ազգային դպրոցների գոյությունն է։ Հեղինակը մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում հայկական դպրոցների թվի, ուսման պրոցեսի, նյութական վիճակի մասին։ Դրական երևույթ համարելով Ռեզա շահի կողմից 1936 թ. փակված ազգային դպրոցների վերաբացումը 1942—1943 թթ. (Թավրիզում՝ 1956—57 թթ.), Հ. Փահլևանյանը միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ հայկական դպրոցները միայն աշակերտների ազգային կազմով էին այդպիսին, որովհետև ուսուցումը պարսկերեն էր, իսկ հայերենը ուսումնասիրվում էր ծրագրից դուրս (էջ 191)։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանահայ համայնքն ապրում էր մշակութային ակտիվ կյանքով։ Հայազգի գործիչները նշանակալի ավանդ են ներդրել իրանական մշակույթի զարգացման գործում։ Հեղինակը մասնավորապես բարձր է գնահատում հայերի դերը իրանական կինոարվեստի, պարարվեստի, ինչպես նաև օպերային արվեստի և այլ բնագավառներում։

Հ. Փահլևանյանի մենագրությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից։ Մանրամասնորեն քննարկելով համայնքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը (էջ 113—124), նա թուցիկ է անդրադառնում հայկական քաղաքական կուսակցությունների գործունեությանը, ցույց չի տալիս նրանց դիրքորոշման մեջ տեղի ունեցած տեղաշարժերը։ Մինչդեռ նրանք զգալի քաղաքական ուժ էին ներկայացնում և անհրաժեշտ էր ավելի հստակ գնահատել նրանց գործունեությունը։ Իրանահայերի՝ հիմնականում քաղաքաբնակների սոցիալ-տնտեսական գրության վերլուծությունը հիմնականում ընդհանուր բնույթ է կրում, հեղինակը չի բացահայտում նրանց սոցիալական տարաբաժանման արմատական տարբերությունները իրանականից։ Հանուն ճշմարտության անհրաժեշտ է նշել, որ դա հիմնականում նյութի սակավության արդյունք է։ Որոշ հատվածներ շարադրելիս հեղինակը զգալի չափով դուրս է եկել ուսումնասիրության ժամանակագրական սահմաններից, որի հետևանքով շարադրանքը ձգձգված է։ Այս ամենը չի նսեմացնում աշխատության գիտական արժեքը։ Այն նշանակալի ավանդ է իրանահայ պատմության ուսումնասիրման գործում։

Ս. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու